ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -266-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «06» «06» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ֆիլմադարան» կինոմշակույթի զարգացման» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության նախագահ Գ. Զաքոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1056. «Կինեմատոգրաֆիայի ծրագիր» ծրագրի «11005. Կինոարվեստի հանրահռչակում» միջոցառման (տող՝ «Ծիրանի ծառ» Ուջանի վավերագրական ֆիլմերի միջազգային փառատոն») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի 9-րդ միջազգային փառատոնի իրականացումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել

ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 4000.0 հազար (չորս միլիոն) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան՝ համաձայն Հավելված N 5-ի, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. սեպտեմբերի 12-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են

դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Ֆիլմադարան» կինոմշակույթի զարգացման» ՀԿ
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3	ք. Երևան Աղասու փ. 30
Կառավարական տուն 2	«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ 220003352840000 ՀՎՀՀ 00897911
Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732	Հեռ՝ 096527732
Գլխավոր քարտուղար՝	Նախագահ՝
Հ. Հակոբյան	Գ. Զաքոյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«06» «06» 2023 թ.
N ՄՇԴ-266-2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի 9-րդ միջազգային փառատոնի իրականացման

1	Կազմակերպության անվանում	«Ֆիլմադարան» կինոմշակույթի զարգացման հասարակական կազմակերպություն
2	Կազմակերպության գտնվելու վայր	ՀՀ, ք. Երևան, Աղասու փ. 30
3	Ծրագրի անվանում	«Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի 9-րդ միջազգային փառատոն
3.1	Բովանդակություն	2023 թվականի սեպտեմբերի 4-11-ը Հայաստանի Լոռու մարզի Դեբետ գյուղում կիրականացվի «Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի 9-րդ միջազգային փառատոնը: 2017-2022 թվականներին փառատոնն անցկացվում էր ՀՀ Արագածոտնի մարզի Ուջան գյուղում, իսկ այժմ տեղափոխվում է Լոռու մարզի Դեբետ գյուղ, որպեսզի նորանոր գյուղական համայքներին հնարավորություն ընձեռնվի մասնակցելու փառատոնի աշխատանքներին և անցուդարձին: Լիամետրաժ, կարճամետրաժ և արտամրցութային ծրագրերում ներառվելու են շուրջ 30 վավերագրական ֆիլմեր՝ աշխարհի տարբեր երկրներից: Արտամրցութային հատուկ ծրագիր նվիրված կլինի հայ կինոյի 100-ամյակին և հայ ու արտասահմանցի հանդիսականներին կներկայացնի մի շարք հայկական ուշագրավ վավերագրական կինոնկարներ՝ անգլերեն ենթագրերով: Ազդարարելով իսպանական Գրանադա քաղաքի «Cinemistica» կինոփառատոնի հետ համագործակցության մեկնարկը՝ մեկ այլ արտամրցութային ծրագրով կներկայացնի տվյալ փառատոնում ներառված լավագույն ֆիլմերը: Ցուցադրվող բոլոր ֆիլմերը թարգմանվելու և ենթագրվելու են հայերեն: Ցուցադրություններին հրավիրվելու են ոչ միայն Դեբետի, այլև հարակից գյուղերի և Վանաձորի հանդիսականները: Փառատոնի տեղացի և արտասահմանցի մասնակիցները (շուրջ 25 մարդ) մեկ շաբաթ ապրելու են Դեբետի բնակիչների տներում՝ անմիջականորեն ծանոթանալով հայ գյուղացու կենցաղին: Կինոցուցադրությունները կազմակերպվելու են Դեբետի այգում՝ բաց երկնքի տակ, ինչպես նաև «COAF» հիմնադրամի Սմարթ կենտրոնի դահլիճում, Դեբետի գյուղապետարանի

		սրահում և «Դեբատուն» հյուրատան այգում: Մասնակիցները հրավիրվելու են էքսկուրսիաների դեպի հայկական պատմամշակութային կոթողներ, մասնավորապես՝ Հաղպատ, Սանահին, Օձուն և այլ դիտարժան վայրեր: Տեղի են ունենալու մասնագիտական քննարկումներ հայ և արտասահմանցի կինոգործիչների միջև արդի վավերագրական կինոյի հիմնախնդիրների վերաբերյալ: Փառատոնին կից կազմակերպվելու է Դեբետի կինոդպրոցը, որի շրջանակում «COAF» հիմնադրամի հետ համագործակցությամբ «Ֆիլմադարան» ՀԿ-ի կինոմասնագետները տեսական և գործնական կինոդասընթացներ են վարելու գյուղացի երեխաների հետ: Կարճամետրաժ ֆիլմերը, որոնք երեխաները կստեղծեն ծրագրի արդյունքում, ցուցադրվելու են փառատոնի փակման արարողությանը: Նախափառատոնային շրջանում նախորդ տարիների հաղթող ֆիլմերը կցուցադրվեն Երևանում՝ Հայաստանի ազգային գրադարանի Մեծ դահլիճում:
3.2	Նպատակ	- «Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի միջազգային փառատոնի հիմնախնդիրն է ապակենտրոնացնել մշակութային կյանքը Հայաստանում՝ հնարավորություն ընձեռելով գյուղական բնակչությանը ոչ միայն ծանոթանալ արդի հայկական և արտասահմանյան վավերագրական կինոյի ամենավառ նմուշներին, այլև անմիջական մարդկային կապեր հաստատել իրենց կողմից հյուրընկվող տեղացի և արտասահմանցի մասնակիցների հետ, ոչ միայն ընդլայնել իրենց պատկերացումներն աշխարհի մասին՝ դիտելով ֆիլմեր, որոնք պատկերում են մոլորակի ամենատարբեր ազգերի, զանազան համայնքների ու խմբերի առօրյան ու հոգսերը, այլև ծանոթանալ ու շփվել աշխարհի տարբեր ծայրերից ժամանած վառ ստեղծագործական անհատականությունների հետ: - Նպատակներից է նաև հնարավորություն տալ փառատոնի արտասահմանցի մասնակիցներին մոտիկից՝ առանց զբոսաշրջային շղարշի, ծանոթանալ հայկական մշակույթին և հայ գյուղացու առօրյային: - Փառատոնն ստեղծում է հատուկ հարթակ, որտեղ հայ և արտասահմանցի կինոմասնագետները կարող են ընկերական մթնոլորտում շփվել, երկխոսել և կիսվել գաղափարներով:
3.3	Անցկացման ժամկետ	Նախապատրաստական շրջան՝ 02 – 08 2023 թ. Փառատոն՝ 04-11. սեպտեմբեր. 2023
3.4	Անցկացման վայր	ՀՀ, Լոռու մարզ, գյուղ Դեբետ ՀՀ, քաղաք Երևան

3.5	Ակնկալվող արդյունքներ	«Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի 9-րդ միջազգային փառատոնի ընթացքում ակնկալվում է խորացնել նախորդ տարիներին ձեռքբերված արդյունքները, այն է՝ ծանոթացնել հայ հանդիսատեսին վավերագրական կինոյի լավագույն նմուշներին, որոնք հաճախ անտեսվում են՝ խաղարկային ֆիլմերի ֆոնին, և հետզհետե ներգրավել մարզային բնակչությանը երկրի մշակութային կյանքի մեջ՝ դարձնելով այն անմիջական միջմշակութային երկխոսության անքակտելի և ակտիվ մաս, ինչպես նաև մոտիկից ծանոթացնել արտասահմանցի արվեստագետներին հայկական արտամայրաքաղաքային ամենօրյա կենցաղին և մշակույթին՝ նպաստելով հայ և այլազգի կինոգործիչների համագործակցությանը: Փառատոնային ռազմավարությունը կնպաստի նաև համայնքային և ներգնա, գյուղական տուրիզմի զարգացմանը, քանի որ Դեբետից դուրս ապրող հանդիսականների համար պայմաններ են ստեղծվելու, որպեսզի գան և փառատոնի օրերին ապրեն Դեբետում՝ ճամբարային քաղաքում կամ գյուղի հյուրատներում, և անմիջականորեն մասնակցեն փառատոնային անցուդարձին: Փառատոնը, Դեբետի կինոդպրոցի ծրագրի շրջանակում, կնպաստի նաև գյուղական համայնքների երիտասարդական բնակչության մշակութային զարգացվածության աստիճանի բարձրացմանը և ստեղծագործական ունակությունների ձեռքբերման հարթակի ստեղծմանը:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Կարճամետրաժ ֆիլմերի մրցույթ՝ 10-15 ֆիլմ Լիամետրաժ ֆիլմերի մրցույթ՝ 10-15 ֆիլմ Արտամրցութային ֆիլմեր՝ մինչև 10 ֆիլմ Հայ և արտասահմանցի մասնակիցներ՝ մինչև 25 մարդ Ժյուրիի անդամներ՝ 3 Հանդիսատեսի ակնկալվող քանակ՝ մինչև 4000 մարդ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Ֆիլմադարան» կինոմշակույթի
զարգացման» ՀԿ
ք. Երևան Աղասու փ. 30
«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220003352840000 ՀՎՀՀ 00897911
Հեռ՝ 096527732
Նախագահ՝
Գ. Հաքոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«06» «06» 2023 թ.
N ՄՇԴ-266 - 2023 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի 9-րդ միջազգային փառատոնի իրականացման ծախսերի

N	Ծախսատեսակների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը, (հազար դրամ)
1.	**Աշխատանքի վարձատրություն (ներառյալ հարկերը)*, այդ թվում՝**				**1 540,0**
1.1	Տնօրեն/ Գեղարվեստական ղեկավար/ Ընտրող հանձնաժողովի անդամ	ամիս	2	230 000	460,0
1.2	Ծրագրի համակարգող/ Ընտրող հանձնաժողովի անդամ	ամիս	2	180 000	360,0
1.3	Տեխնիկական համակարգող/ Ընտրող հանձնաժողովի	ամիս	2	180 000	360,0
1.4	Դիզայներ/ Վեբ կայքի համակարգող	ամիս	2	180 000	360,0
2.	**Կազմակերպչական ծառայություններ, այդ թվում՝**				**1 560,0**
2.1	Ֆիլմերի ենթագրում՝ 30 ֆիլմ x 25000 դրամ = 750000 դրամ	հատ	1	750 000	750,0
2.2	Ֆիլմերի թարգմանություն՝ 30 ֆիլմ x 27000 դրամ = 810000 դրամ	հատ	1	810 000	810,0
3.	**Փառատոնի պայուսակների ձեռք բերում**	հատ	40	2 000	**80,0**
4.	**Փառատոնի պայուսակների տպագրություն**	հատ	40	778	**31,1**
5.	**Սոցիալական մեդիայի գովազդ (Facebook, Instagram)**	ամիս	1	122 200	**122,2**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**3 333,3**
	ԱԱՀ**				**666,7**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ				**4 000,0**

*** Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**

***** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական***

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732
գլխավոր քարտուղար
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

ԿԱՏԱՐՈՂ՝
«Ֆիլմադարան» կինոմշակույթի զարգացման ՀԿ
ք. Երևան Աղասու փ. 30

«Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220003352840000 ՀՎՀՀ 00897911
Հեռ՝ 096527732
նախագահ՝
Գ. Զաքոյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«06» « 06» 2023 թ.
N ՄՇԴ-266 -2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

<< ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«06» «06» 2023 թ.
N ՄՇԴ-266 -2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)
բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝
_____

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝
_____

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝
_____

ՀԱՎԵԼՎԱԾ N 5
«06» «06» 2023 թ.
N ՄՇԴ-266 -2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1056	Միջոցառում 11005	Կինեմատոգրաֆիայի ծրագիր												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների (աճողական)												
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			ԸՆԴԱՄԵՆԸ
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	463900		0,0	0,0	0,0	0,0	0,0	3200,0	3200,0	4000,0	4000,0	4000,0	4000,0	4000,0
Ընդամենը			**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**0,0**	**3200,0**	**3200,0**	**4000,0**	**4000,0**	**4000,0**	**4000,0**	**4000,0**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության,մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն N2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հաշիվ N 900011033348
ՀԿՀՀ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
Կ.Տ.

ԿԱՏԱՐԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Ֆիլմադարան» կինոմշակույթի զարգացման» ՀԿ
ք. Երևան Աղասու փ. 30
«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ
ՀՀ 220003352840000 ՀԿՀՀ 00897911
Հեռ՝ 096527732
Նախագահ՝
Գ. ՉԱԲՈՅԱՆ
Կ.Տ.